



## 177. ՀՐԵՇԱՆ ԾԻՆ

Մին թաքավերի հորուր ենդա հսած իրեք զաշանգ տղերը օներ: Թաքավերը թողում չէր, վեր տղերքը տանան հեռու տեղեր քյնան, իլլաքիմ մինակ, շտեղ քյնում ին, մին բանի զուլուղի էր տընում նշեանին:

Մին օր մեծ տղան հորը լսեց վել, ուրան ծին նստեց, թա.— Ես քյնալ պիտեմ ինձ հետի աշխարքը ման կյամ, վել մին մարթ էլ թողալ շեմ ինձ նշեա կյա:

Թաքավերը շատ խնթրեց տղին, վեր մինակ չի քյնա, ամալ չի եկը, սրտընին ծին եր իլավ թա.—Ես կումի խոխա ե՞մ, վեր մարթիկ ինձ յեշե՞ն: Բոլ վեսկի եր կալավ, ծին քյշեց քյնաց:

Մին բանի օր ճնապա քյնաց, ցիրեկը ճնապա էր քյնում, ուրուգունը քըլվըսըրեգումը եր կյամ, օտում, խմում, քոն ինում, ըսագիտը շնուր եր էր կենում, էլլ՛ա քյնում: Վել մին տեղ էլ ասում չեր, թա ինքը թաքավերին տղաւն ա:

Մին շափտան ետը հսավ մին գյուլու բաղ, բաղ հի՞նչ բաղ, հունց վեր մին դրախտ, ծին-քյշեց նի մտավ էտ բաղը, ըշխարքիս իրեսին հինչ ջնուա պտուղ օգես էտ բաղումը կար, հինչ տեսակ զուշ ասես, կար, ծըլվըլոցը քըցած երքում են:

Թաքավերին տղան ծիան եր եկավ, ծին տարավ մին ժառա կապեց, լորս զոլին եշեց, տեսավ մին մեծ գյուլ, քյնաց դըբա էտ

գյուղը։ Օզում էր էտ գյուղին միշլին նախշուն-նախշուն ծկեկներին թշմաշա անի։ Նոր էր գյուղին դրաղը հսալ, վեր ընջուկավը մին վշշոցի սաս ընգյավ, կարաց էլ վեշ, թա ետ եշի, մին հրեղան ծիյավիք երգինքան քըշացավ, հըսավ թաքավերին տղին, խըզըտական փռնեց, պըզըրթրուց, տարավ ասսանց եր տիրավ, գյուղին միշլին մին մարաք կար, էտ մըրաքումը՝ տուներ կապեց։ Խնքը թռավ, կորավ։

Մին ամիս անց էր կըցալ, խարար չի կար, թաքավերը շատ էր մտածում, վեր տղան եկավ վեշ։

Միշնակ ախպերը տեսավ, վեր ախպերը նտ չի տառավ, ինքն և թաքուն ընդրա ճեապան փռնեց քյնաց ախպուրը ենդան։

Շատ ման կյալան հտը էս տղան էլ եկը ընգյավ էտ դրախտի բաղը։ Տարավ ժին համին էն ծառան կապեց, շտեղան կապալ էր ուրան ժին մեծ ախպերը։ Մին կըպիլան հտը քյնաց ման կյա էտ բաղումը, էս էլ տեսավ գյուլը, մուտացավ գյուին, ընջուկավը վըշշոց ընգյավ, հրեղան ծիյավիքը երգինքան եր եկը ըստրա վըզան էլ փռնեց պըզըրթրուց տարավ տըրավ ախպուրը կոխսկին, ինքը թռավ, քյնաց։

Թաքավերը քյշեր ցիրեկ դարդ էր անում, քոն չօներ, մըրթ ծիլան լզարալ էր, չոփ տառալ

Զորք զարկեց ըշխարքիս չորս դոլը, վեր ման կյան տըղործը ճարին։

Թաքավերին կումի տղան շատ խընթըրեց հորը, վեր թուկ տա, ինքն էլ քյնա ախպուրը հարային։ Թաքավերը թողաց վեշ, ասեց։ — Տե՛ վել ընդրանց նըման կըթյնաս կըկորչես, ընդրանա հտը ես էլ հոր եմ ապրում։

Մին օր թաքավերին կումի տղան էլ հորան թաքուն ուրան ժին նստեց փախավ քյնաց ախպուրը ենդան ման կյալի։

Էս կումի տղան էլ ախպուրը ճեղպավը քյնաց, շատ ըրշարվեց, շատ մարթկանց հըցըրուց, կարացվել գյիգան, թա ախպերը թորըն են քյնացալ։ Շատ ման կյալան հտը եկը ընգյավ համին էտ բաղը։ Մըտածեց, թա ուրան հերը խե՞ ըստըհենց մին բաղ չօնի։ Միյան եր եկը ժիին լոխտան փռնեց, քյնաց դըրա բաղվանչում տոնը։ Պարիօր ասեց, կոխսկին նստեց, հըցըրփորց ըրավ, թա—էս բաղը հոկրըն ա՞, ըստեղ ժիյավեր չի՞ եկալ։ Բաղվանչին թա։ — Միյավեր չի յուրուվացալ, ամմա հսաա էրկու ամիս ա էրկու ծի եմ տարալ թաքավերին կյումը, անդեր ին, տերը յըրվաց վեշ, էս էլ տարա, հեն է, էն ծառան կապած ա ըլալ, մինը մի ամիս տուալ, մինն էլ էրկու ամիս առալ եմ տարալ։

Թաքավերին կումի տղան տեղան եր թըռավ, հանեց շնկրան մին հափուո վեսկի տվավ բաղվանշուն, ասեց.—Դե քլանք ծիյանքը տեսնամ:

Սիւանքը տեսնալը բախտան, ախպուրցը ծիյանքը նընանչեց: Թաղվանշուն ասեց, վեր էտ իմ էրկու մեծ ախպուրցը ծիյանքն են, գի ինձ քյումագ ըրա ախպուրցը թըթանամ: Թաղվանշին ասեց.— Բալա շան, տու լավ տըղա ևս լըրովում, ըրուա հետի ծիյանքին տեղը ըսեցի, ամմա ախպուրցը տեղը մինակ թաքավերին ախ- ճիկը կը զիիդա, պետկա քյնաս ընդրա կոխսկը: Հեն է էն պա- լատը վեր յըրովում ա, թաքավերին ըխնըկանն ա: Ինքը հենա ու- րան ութաղումը քոն իլած, ընդրա տըռնին տակավը նի մըննիլի տեղ կա, պետկա քյնաս տըռնին տակավը փըրըսող աւլավ թաքուն նի մըննես ընդրա օթաղը, կը պըցըրանաս, դժշին կընստես, դամատ տըռնին վրդին: Կասեմ՝ ախպուրցը տեղն ասի, թալընա քեզ մոր- թում եմ: Ինքը հորավ-մորավ ուրթում ա ուտիլու թա՝ տեղը զյան- դում եմ կըզադեմ, հավատաս վել, մինչև ասի վել՝ ծիիս արևը, ախպուրցը կըզադեմ: Հենց վեր ծիին ըրևավը ուրթում կերավ կը հըվատաս, պաց կըթողաս:

Էս բալամը բաղվանշուն խոսկավը քյնաց թաքավերին ըխ- նըկանը ութաղին տըռնին տակավ փըրսող տալավ նի մըտավ, տեսավ մին զյանդալ, մին շարմադ հրեշտակ, հենա մեշկին յըան պըրանած, դժշը պաց, էրկու նոռնը պարակ համին տական տը- որգած:

Թաքավերին կումի տղան ասսանց պըցըրացավ ընդրա զյշշին նստեց, դաման տըրավ վրդին, թա.—Յա ախպուրցը տեղն ասի, բզադի, յա մորթում եմ: Էս ախճիկը վինիլան ուշը քյնաց, վեր օչքի եկը, տեսավ մին դաշանգ տղա յա ուրան զյշշին, ուրթում կե- րավ հորը մորը ըրևավը թա, ախպուրցը ինքն ա դուադ ըրալ, ինքն էլ կըզադի: Թաքավերին տղան հըվատաց վել, ասեց.—Թա դուու ևս ասում, խե ծիիս անումավ չես ուրթում օտում, դե ասի ծիիս արևը ախպուրցը կըզադեմ, հըվատամ: Թաքավերին ախճի- կը ասեց.—Իմ հրեղան ծիիս արևը, ախպուրցը կըզադեմ, հալա քեզ էլ ինձ նշանած կառնեմ, ա զոշադ, փանդավ, նախշուն տղա: Էս ըսիլան ետը խտտեց մին պենդ պոռշտի ըրավ:

Երկըցան մըտեղ քյնացին, էտ ախճիկը ուրան հրեղան ծիին նստեց, թռավ քյնաց զյուին միշան թաքավերին էրկու տղորցը

մին-մին տու կալավ պերավ տըրավ կումի ախպուրը կոխին,  
ասեց.

— էտ էլ քու ախպերը, մհեկ հինչ կասես:

Իրեք ախպեր ուրուր կովերավ ընդուն պըզպըլուրեցին ուր-  
խացան:

Թաքավերին կումի տղին փըսըկեցին, հրսանիք ըրին: Հրսըն-  
քան ետք մեծ ախպերը ուրանց ծիանքը նստեցին հայդե-հարա,  
հզի իլան քյացին հսան մկանց տոն:

Թաքավերին պըզատումը մին պել Խաչի կար, վեր ընդրան  
ասում ին.—Խաչի ասի մաժմահի, ասում էր ժաժմահի: Վեր ասում  
ին ասի փալանքյան, Խաչին ասում էր՝ թինամ-կյամ: Խաչին վեր  
թաքավերին տղորցը տեսավ, դմստին ասեց.—Ա տընըշինի խո-  
խերք էտ շտե՞ղ եթ կորալ, թաքավերը ծեր գարդան մին խախալ  
ծնւ վա ածալ: Թաքավերին տղերքը պըզութումը, ընդրա փսակվիլը հրեղան  
ծիյատեր թաքավերին ըխճրկանը նհետ:

Թաքավերը մեծ քյեփ սարքեց, լոխ պըզատականներին դոնադ  
կանչեց լավ քյեփ ըրին:

Էրկու տըզորքըն էլ փսակեց էրկու գլոզալ հարթներ պերավ  
տոն:

Թաքավերին կումի տղան մին օր ուրան հրեշտակ կընզանը  
նհետ ման կյալ էր թինացալ: Հունց ա ինում, մին օրիշ թաքա-  
վերի ազափի տըզա ըտըրանց կոխկավը անց կընալիս, էս կընդանը  
մուշտմբու աշկավ ա եշնում, դմստին սիրահարվում: Թինում ա  
մըտածում, թա հինչ անի, վեր թաքավերին էն հրեշտակ ախճիկը  
էն տղին ծերքան խլի: Շատ մարթի ա հըրցըփորց անում, պան  
շի տու կյամ: Մին օր մին պառավ կնեկ ա կյամ ըտրա կոշտը,  
ասում:—Տղաս, բալա ջան, ես քու օզած կնզանը կարամ պիրեմ  
ծեր տոն, մինակ հինչ վեր օզեմ, կարա՞ս անես: Խնձ հետի մին  
մեծ լաշիկ շինիլ տու, ինձ տիր միշին, ըռեխը կապի, տար տիր  
կյետին իրեսին: Կյետը ինձ կտանի ընդրանց բաղը, ընդրանա ետը  
ես եմ գյուղում:

Էս տըզան մին պըրախողի թահրի յաշիկ շինիլ տվավ: Էտ  
յաշիկը կյետին իրեսին համ տուվեր էր թինում, համ էլ կը կարար  
տիյեր քյինաբ:

Պըրավին տըրավ էտ յաշիկումը, ղափաղը պընդըցրուց, տա-  
շավ տըրավ կյետին իրեսին, կյետը քյետ տարավ տեմ ըրավ էտ  
թաքավերին բաղին լըրբանդին:

Բաղվանը եկը էտ յաշիկը տեսավ, ամմա վրխտավ ծերք տա, քյնաց թաքավերին ըխճեկանը դուզող ըրավ, թա ըստընենց մին մեծ յաշիկ կյատը պերալ ա բաղին լըրբանդին տեմ ըրաւ, բալբամ ծերըն ա, եկեք տեսեիք:

Թաքավերին ախճիկը մարթին նհետ քյնացին յաշիկը պաց ըրին, տեսան միշին մին պառավ կնեկ կա, կոչ եկած, էտ պառավը դաշանք-պղատանք ըրավ, վեր ուրան սպանեն վեշ, տանեն պահեն, ուրանց տանը կործը ինքը կանի:

Թաքավերին կոմի տղան կընգանն ասեց.—Եկ էս կընգանը տանենք պահենք մեխկըն ա, կնեկը զաիլ չեր, ասեց.—Ըտրանա շառը շըռշըռում ա, Հարկավեր շի Շատ մըտքիլան ետը մեխկըրին եկը, էտ պղռավին եր կալան պերին տոն:

Մին քանի օր վեր անց կըցավ, ճաշին վախտին էտ պառավը թա-մտաս թըռուալ ա, հենա էն յշիկումը մին կոլա սև կինի օնեմ, շատ լավըն ա, քյնամ պիրեմ մըտեղ խմենք:

Էս պառավը քյնաց կինավ լիքը կոլան տըրավ օսին պերավ: Ըսկըսեցին խմիլ, խե լավ էլ կինի էր, ամմա շատ թօնեդ էր: Մարթը-կնեկ մինչկ վերը խմեցին, պառավը ուրան կինուն օժը գյուղուն էր, ինքը աման դինում մին կոլտում, էրկու կոլտում էր կոլտամ, ասեց.—Ես պառավ կնեկ եմ, կարում շեմ շատ-շատ խմեմ, տուք շահիլ եք, ծեր ուտիլի խմիլի վախտըն ա, խմեցեք:

Վեց փարչ կինին էրկու հոքավ տըրացկեցին, ըրկոքանն էլ թունդ հրփեցին, նստած տեղընին քոն իլան: Պառավը էս ըխճեկանը շըռակեց տարավ տըրավ ուրան պրախոդ յըշիկումը, ինքն էլ կոխպին նստեց, տարավ էն տղին տոնը:

Ախճիկը վեր աշկերը պացավ, օշքի եկավ, տեսավ ինքը հենա մին օտար տան, քիլ մնաց թա կյժվեր, Տղան շորս դոլավը շոռ էր տամ խնթռում, թա.—Վախիլ մի, ես քեզ զյուկի պես եմ պըհիլու, քեզ վեր տեսալ եմ աշկըս փոնալ ա, ըտրա հետի էլ փըխցըրալ եմ, էլ նհախ տեղը մտածիլ մի, տու իմ ծերբառ կարալ շես պրծընի: Լավը էն ա, վեր տու վել ինձ սիրես, կը տառնաս ըշխարքին ամենաբախտավեր կընեկը:

Էս ախճիկը տեսավ, վեր ըտրանա պըրծընիլը հեշտ պան շի, մտածեց, մըտկում տըրավ ըտըրան խափիի: —Ես քու կնեկը կը տառնամ էն վախտը, հետ վեր ինձ հետի ճարես ըշխարքիս ամենալավ հրեղան ծին, վեր նստեմ երկինքավը թունեմ: Թա կըրացիր վեշ ճարես, ինձանա պետկա ծերը քաշես:

Տղան սաղ ըշխարքիս շորս զոլերը մարթիք զարկեց, վեր ման կլան ամենալավ հրեղան ծին ճարեն, պիրեն:

Հիշքան ծիյանք պերին էտ ախճիկը եշեց, հավան չի կըցավ,  
և արարը թյնաց հսավ թաքավերին կունի տըղին:

Թաքավերին տղան կլիսի ընդուավ, վեր կա, չիկա, էտ ուրան  
կընգանը փանդըն ա: Եր կըցավ թյնաց կընգանը հարային: Տա-  
րաւ ուրան ծին կապեց աման դոլա եկած ծիյանցը կոխեին:

Էն տղան թաքավերին ըխճրկանը ասեց, լավ-լավ ժիանք շատ  
են պերալ, տուս կյանք թյինանք եշենք վերին հվանես, ուրան  
քաշամը վեսկի էլ օզեն, կըտամ կառնեմ քեզ հետի: Տուս եկին  
ծիյանցը եշիլավ անց կըցան, վեշ մինին հավան չի կըցավ, ա-  
սեց.—Ըստրանց միշին իմ օզած ծին կապեց: Եշիլավ եկը հսավ  
ուրան մարթին, մուտացավ ընդրա ծիին եշեց, համ էլ ընջուկին  
ասեց՝ կըքինաս իմ ծիս կըպիրիս քու ծիին տեղը կը կապես, ըս-  
տրրա կըոխուր թյալագ պետկա կյամ: Էրկու օր քեզ կը սպասեմ:

Թաքավերին տղան թյնաց կընգանը ծին եր կալավ էրկուհինցի  
օրը հսավ բտեղ, ուրան ծիին տեղը կապեց: Ընդրա կնեկը փըխցը-  
նողը, վեր էտ ծին տեսավ, պերանը մընաց պաց յիշիլիս, թյնաց  
թաքավերին ըխճրկանը ասեց, թա:—Թու օզած հրեղան ծին պե-  
րալ էն, թյնանք տես, էս դձնում էլ կարալ չես ասես, թա:—Էտ  
իմ օզածը լի:

Թաքավերին ախճիկը քըթին տակին ծիծաղեց, թյնացին ծիին  
կոխեց: Սին հեռվից ընդրան ճընանշեց, սկըսեց խըրխընչալ, վըն-  
դերավը տափը քանդիլ: Հունց վեր հըսան հրեղան ծիի կոխեց,  
թաքավերին ախճիկը ասեց.—Հա, էս իմ օզած ծին ա, կաց մին  
փորցեմ, թուավ նստեց ծիին յըհարին, ուրան մարթին էլ քաշեց  
տըրավ թարքին, ծին թուավ երգինքին, շոռ տվավ եկը էտ տղին  
խըդկոթան փոնեց նհետնին տարավ քցեց ուրան բաղին գուլը,  
թա:—Դէ մհեկ թյնա խալիսին կընգանը փըխցըրու:

Թաքավերին կոմի տղան ուրան սիրած կընգանը նհետ բախ-  
տավեր կյանք անցկըցրին, նախշում-նախշում խոխերք իլան,  
մըծմըծացան, լոխումքն էլ հըսան ուրանց մուրաղին, ըստրա  
կարթուղն էլ հոնի ուրան մուրաղին:

